20.02.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01-01 պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ

համաձայնագիր № 2

ք. Երևան 30 դեկտեմբերի 2019թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ԿԱՐԵՆ և ՌԱՖԻԿ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ռ.Հայրապետյանի (այսուհետև՝ Վաճառող),մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01-01» պայմանագրի 8.8 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը և 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին 2019թ. փետրվարի 20-ին կնքված № ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01-01 պայմանագրի մասով ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագրի 1-ն կետում նշված ծառայությունների մասով վճարման ժամանակացույցը կհաստատվի լրացուցիչ համաձայնագրի միջոցով 2020թ.:
3. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-01-01» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
4. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից. սույն համաձայնագիր № 2-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«Կարեն և Ռաֆիկ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ.Հերացի 12	Հասցե՝ Արարատի մարզ, Արտաշատ-Դալար խճ. թիվ 1
Երևանի թիվ 1 ՏԳԲ	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Արտաշատ»մ/ճ
Հ/Հ 900018004649	Հ/Հ 163098242841
ՀՎՀՀ 02625503	ՀՎՀՀ 04221649
Գլխավոր տնօրեն՝ Ա.Վանյան	Տնօրեն՝ Ռ.Հայրապետյան
_____ (ստորագրություն) Կ.Տ	_____ (ստորագրություն) Կ.Տ